

Ա Մ Ա Ն Ո Ր Ի Ա Ռ Թ Ի Վ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. Վ Ա Զ Գ Ե Ն Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ
ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՄԵԾԱՐԳՈ ՏԻԱՐ **ՆԱԳՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ**

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ
ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԵԾԱՐԳՈ ՏԻԱՐ **ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ**

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ
ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԵԾԱՐԳՈ ՏԻԱՐ **ԿԱՐԼԵՆ ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ**

ԵՐԵՎԱՆ

Նոր տարվա առթիվ հաճեցեք ընդունել Մեր ջերմ շնորհավորանքները և սրտագին բարեմաղթությունները անձամբ Ձեզ և մեր հայրենի կառավարության բոլոր անդամներին: Մաղթում ենք Ձեզ քաջառողջություն և Ձեր հայրենաշեն գործոց հաջողություն:

Աղոթում ենք առ Աստված, որ նոր՝ 1964 թվականը լինի տևական խաղաղության, սովետական ժողովուրդների բարօրության, մեր մեծ հայրենիքի նոր վերելքի ու հետագա ծաղկման տարի:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՋԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության և անձամբ իմ անունից շնորհակալություն եմ հայտնում նոր տարվա առթիվ Ձեր հղած ջերմ շնորհավորանքի և անկեղծ բարեմաղթությունների համար: Սրտագին շնորհավորում եմ Ձեր նոր տարին: Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և բարօրություն: Թո՛ղ առաջիկա նոր տարին լինի ամբողջ աշխարհի խաղաղության, ժողովուրդների իրարհասկացողության և սերտ բարեկամության տարի:

Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի
նախագահության նախագահ

ԵՐԵՎԱՆ

Զգացված եմ նոր տարվա առթիվ Ձեր հղած ջերմ շնորհավորանքների և բարեմաղթությունների համար: Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի և անձամբ իմ կողմից սրտանց շնորհավորում եմ Ձեր նոր տարին, ցանկանում ամրապինդ առողջություն, կորով և եռանդ: Թո՛ղ Ձեր ջանքերը անսպառ լինեն աշխարհում տևական խաղաղություն ամրապնդելու ընդհանուր և առաջնահերթ պայքարի մեջ:

Ա. ՔՈՉԻՆՅԱՆ
Հայկական ՍՍՌ Մինիստրների
սովետի նախագահ

ԵՐԵՎԱՆ

Նոր տարվա սեմին ընդունեցեք խնդրեմ խորհրդիս և իմ սրտագին շնորհավորանքը: Քաջառողջություն ենք ցանկանում և հաջողություն:

Կ. ԴԱԼԼԱՔՅԱՆ
Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր
Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ

ԵՐԵՎԱՆ